

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

### ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

16.01.2017թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Վ. Գևորգյանը, Դ. Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ս. Գրիգորյանը, Հ. Մկրտչյանը, Ն. Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյան - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

#### Օր ա կ ա ր գ ու մ`

1. ՀՀ Վարչապետի` Լոռու մարզ կատարվելիք այցի նախապատրաստական աշխատանքների մասին  
/Ա.Նալբանդյան/
2. ա/ Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին  
բ/ ՀՀ համապետական ընտրությունների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին  
/Ջեկ. Ն.Սարգսյան/
3. Ֆրանկոֆոնիայի երկամսյակի կազմակերպման մասին  
/ Ջեկ. Լ.Ասլանյան/
4. ա/ Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին  
բ/ Համայնքներում բյուջեների կազմման ծրագրերի ընթացքի մասին  
/ Ջեկ. Հ.Պապոյան/
5. Լոռու մարզի 2017-25թթ. զարգացման ռազմավարական և համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի մշակման հետագա աշխատանքների ընթացքի մասին  
/ Ջեկ. Հ.Մկրտչյան/
6. Այլ հարցեր:

## Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Յուրաքանչյուր ամիս կազմակերպել համատեղ այցեր մարզի համայնքներ, այդ նպատակով ամսվա վերջին ներկայացնել հաջորդ ամսվա այցելությունների գրաֆիկը և այցելությունների ընթացքում վերհանել համայնքների խնդիրները ու ներկայացնել դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին՝

5-օրյա ժամկետում ներկայացնել ֆրանկոֆոնիայի երկամսյակի կազմակերպման և անցկացման վերաբերյալ առաջարկություններ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

Վանաձորի քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպել քննարկումներ և իրականացնել համայնքի ակտիվների (ռեսուրսների) գրանցում՝ հետագա ներդրումային ծրագրերի մեջ դրանք ներգրավելու նպատակով:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին՝

Ուսումնասիրել և ներկայացնել մարզի ֆինանսավորման խնդիրներ ունեցող դպրոցների վերաբերյալ տեղեկատվություն և առաջարկություններ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից պարարտանյութի և սերմացուի պարտքերի մարման ուղղությամբ և 2-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ